

Յօդուածագիրը կովկասեան ժողովրդական դպրոցների ալս բացասական արդիւնքի պատճին և զմբաւոր պատճառը համարում է այն հանգամանքը, որ այդ դպրոցներում ուսուցումը մալրենի լեզուով չէ տեղի ունենում—աւելացնելով, որ մի ժամանակ, եթե Կովկասեան ժողովրդական դպրոցներում ուսուցումը մալրենի լեզուով էր աւանդում, ուսւաց լեզուն աւելի հիմնաւոր կերպով էին իւրացնում աշակերտները, քան այժմ։

Ալդ մտքի ճշմարտութիւնը ցոլց տալու համար մենք կարող ենք իրեն փաստ առաջ բերել այն հանգամանքը, որ երբ հալոց ծխական դպրոցներում ուսուցումը մալրենի լեզուով էր աւանդում, հայ աշակերտները և աշակերտուհիներն ալնքան հմուտ էին լինում ռուսաց լեզուին, որ շատերը մի ամուսուալ ընթացքում միայն պատրաստուելով՝ մտնում էին պիտակտն նորն իսկ միջնակարգ դպրոցների համապատասխան դասարանները Աւար էլ մենք ունինք ռուսական համալսարաններում բաւականաչափ հաւ ուսանողներ, որոնք իրենց ուսման ընթացքն հալոց սեմինարիաներում աւարտելուց լետոր՝ լաջող քննութիւն տալով հասունութեան վկայական են ձեռք բերել պետսկան գիմնազիաներում և ապա համալսարան մտել։

ՄԱՆԿԱՎԱՐԺ

ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսի հայ լրագիրները հաշորդում են, որ Օսմանեան ինքնակալը իրադէով հաստատել է Կիլիկիու նորընտիր Տ. Տ. Սահակ Կաթողիկոս Խապ, լենցին և Ասի մալրավանքում պաշտօնագիս սկսուել է հալրապետի անուան լիշտակութիւնը. Ակս օրերս Կ. Պօլսի պատրիարքութեան կողմից առանձին հրատիրակ պատրաւորութիւն է ուղերուում Սրուսաղէմ նորին Ամենապատուութեան առաջնորդելու դէպի Սիս, ուր և ըստ հնաւանդ ծէսերի կատարուելու է կաթողիկոսի օծման արարողութիւնը.

ԳՈՂԱՑՈՒԱԾՈՐ ՈՐԲԵՐ

Նրկուերեք ամիս է, որ հրապարակի վրայ է մի խումբ թշուառ որբերի սեպհականութեան խնդիրը. Ի՞նչ տարօրինակ բան ասես, մեր կենաքումն է պատահում. 14 փոքրիկ, անմեղ, դժբախտ մանուկներ զրկուած ծնողների հոգատար խնամքից, վէճի առարկալ են դարձել. Մէկն ասում է.

«որբերն իմն են, որովհետեւ ինձ են լանձնուած, ես իրաւունք ունեմ վարուել նրանց հետ իմ ցանկութեան համեմատ, ես որբանոց ունեմ, արանց ազդ որբերի որբանոցս կիակուի, անաքանդութիւն կը լինի»: Հակառակ կողմն ապացուցանում է, որ Լօնդոնում հակական որբանոց չկալ և հալ երեխաները պէտք է երեակարական որբանոց՝ տիրոջ շահախնդրութեան առարկալ դառնան: Նամակներ և հեռագիրներ են տեղում Փարիզից Էջմիածին, Էջմիածնից Լօնդոն և ընդհակառակը: Այս հէքիաթանման գործի համառօտ էութիւնը հետեւալին է:

Անցեալ տարի, օգոստոսին, ս. Էջմիածնում Վեհ. կաթողիկոսին ներկաւանում է Մ. Փիրանեան անունով մի պարոն պրօֆ. Թումալեանի տպուած մի լաւտարարութիւնը ձեռաքին և խնդրում, որ իրեն լանձնուին հալ որբեր Լօնդոն տանելու, Թումալեան որբանոցում տեղաւորելու համար. Լօնդոնի որբերը պահուում են բարեպաշտ անդիմացիների բարերարութեամբ, բայց որովհետեւ անլարմար է, որ դրանց ճանապարհածախքն էլ անգլիացիները տան, խնդրում է Վեհ. կաթողիկոսին որ որբերի համար զգեստ և ճանապարհածախք տալ: Գթասիրտ Հարլապետը հարկաւ չէ մերժում և 14 որբերը նոր սպիտակեղին, կօշիկ, զղեստ, նորն իսկ վերմակ և ճանապարհածախք են ստանում: Փիրանեանը հալրապետական կոնդակը ծոցին ուղերուում է դէպի Լօնդոն և ճանապարհին, Վլաղիկավիազ, Ռաստով, Վ.իչննա, Փարիզ մտնելով՝ ամեն տեղ փողեր է կորպում որբերի ճանապարհածախքի անունով և Վլիչննալում մինչև անգամ Պարսից զեսպանի օգնութեանն է դիմում և նորնու զրամ ստանում: Սակայն լուսան ամեն անգամ զաթալ չի բերից. ճարպիկ Փիրանեանը Փարիզում թակարդի մէջ է ընկնում: Փարիզի հալերը զարմանալով՝ որ իրենցից ոչ հեռու գտնուող Լօնդոնի հալ որբանոցի մասին ոչինչ չեն լսել ցածմ, կասկածում են և տեղական հալ քահանալին շուտափոլթ ուղարկում են Լօնդոն՝ տեղեկանալու «Թումալեան որբանոցի» մասին: Արժ. Վաւամշապուհ քահ. վերադառնում է Փարիզ և լալտնուա, որ հակասկան որբանոցը գոլութիւնունի միմիալն պրօֆ. Թումալեանի երեակարութեան մէջ: Պրօֆ. Թումալեանն էլ հարկաւ շտապում է Փարիզ և չկամենալով որսը ձեռքից բաց թօղնել, դիմում է նորն իսկ Փրանսիական գատաստանին, որ ազդ միջոցով լստ ստանա՞կորցրածը: Դատարանը քննելով ալս խալտառակ դործը որոշում է, որ որբերի վիճակը կարող է որոշել միմիալն Ամենալն հարց Վեհ. կաթողիկոսը. Երկու կողմից էլ դիմում են Վեհ. կաթողիկոսին: Փարիզի բանիքուն հալերն անտարբեր չեն մնում և որոշում են իսկ որբերի ապրուստը հոգալով՝ աղատել շահագործողի ցանցից: Վեհ. կաթողիկոսն էլ իրազեկ Վինելով ճշմարտութեանը՝ շտապում է մի երկրորդ կոնդակով պատուիրել, որ որբերը լիտ առնուեն Թումալեանից և լանձնուեն Փարիզի հալերին:

Ալս աւլանդակ և առասպելական իրողութեան մի մութ կէտն էլ մնում է Նըրոպալի սրբ. առաջնորդ Գէորգ եպիսկ. Խւթիւնեանի բռնած դիրքը՝ Նա պնդում է, որ Թօմալիեան որբանոցը զուութիւն ունի և Վառամշապուհ քահանան լանցանք է գործել, որ առանց իր գիտութեան երեան է հանել խարդախութիւնը և նեղոց հալ որբերին աղատել անլալտ ապագավի ով գիտէ թէ ինչպիսի արկածներից:

Ուր հասանք. մի մարդ, որ իրեն պրօֆէսոր է անուանում, հալբենասիրութեան համար տաճիկներից դատապարտուած է եղել մահուան, բանտում սարսափելի տանջանքներ է կրել և հազիւ ազատուել, ալժմ իւր դժբախտ ազգակիցների թշուառ, անմեղ որբերի գոլութիւնն է ուղում շահատակել և իր համար ալդ միջոցով ապրուստ հալթալթել, սարսափելի է:

ԲԵՌԼԻՆԻ ԵՐԵԿՈՑԹԸ

Վերջին տարիներս Գերմանիալի հալ ուսանողները մի գեղեցիկ միաք լցացան, այն է երեկոլթեր սարքելով՝ գերմանացիներին ծանօթացնել հալոց կեանքի և գրականութեան ձեա. համալսարանական մի քանի քաղաքներում ալդ երեկոլթները կրկնում են պարբերաբար և որոշ չափով իրենց նպատակին ծառայում. Ալդ երեկոլթներին հրաւիրում են համալսարանի ուսուցչապիտները և լաւոնի անուն ունեցող դրագէտներ և բանասէրներ. երբեմն վերջիններս մասնակցում են նորն իսկ երեկոլթին նախապէս պատրաստած բանախօսութիւններով և իրենց գիտողութիւններն անում մեր գրականութեան, քաղաքակրթութեան, նաև հալոց խնդրի մասին.

Վերջին տեսակէտից ալդպիսի երեկոլթներից նշանառը հանդիսացաւ փետրուարի 2 ին (նոր տօմարով) Բեռլինում կալացած հակակ ան երեկոլթը, ուր ներկալ էին շատ գերմանացի լաւոնի մարդիկ, ինչպէս օրինակ աշխ արհանչակ դրամատուրգ Հէրման Զուղերմանը, որի պիէսներից մի երկուորթարգմանուած են նաև հալերէն:

Այս երեկոլթի թանկագին զարդը պէտք է համարուի ժամանակակից մարդկութեան ամենախոշոր տաղանդներից մէկի, Գէորգ Բանդէսի բանախօսութիւնը. Համակրելի պրօֆ. Կոպէնհագէնից եկել է Բեռլին լատկապէս հակական երեկոլթին ներկալ գտնուելու և բանախօսելու համար:

Գերմանական կառավարութեան տաճկասիրական ուղղութեան (իսկապէս սեպական շհների համար) շնորհիւ Գերմանիալում լուս տեսնող քաղաքական թերթերից շատերն ալնքան էլ նպաստաւոր տեղեկութիւններ չէին տարածում Տաճկահակների մասին և նաև մանաւանդ նրանց ալժմեան պինակի վերաբերմումը. Բրանդէսի հրաշունչ բանախօսու-